

Էջ 02

Յօդուած
Մեղսագործներն Մանրապատումներ

Էջ 03

ԹՄՄԻ Լուրեր
Հրապարակային Պատմական Վահրամ Մավետի 90-ամեակին Առիթով (1926-1983)

Էջ 04

Մարզական
Մեյրուպա Յարթեց Հուլիսին

Լիբանանեան Լուրեր

Ժամաժամ Կողմնակից Ե Լոյնանման Մտածողութեամբ Օժտուած Կողմերով Կառավարութեան Մը Կազմութեան



Լիբանանեան Ուժեր կուսակցութեան Նախագահ Սամիր ժամաժամ յայտարարեց, որ կառավարութեան կազմը պայման չէ ներկայացուցչական ըլլայ: Ներկայացուցչական յատկանիշը Լիբանանի խորհրդարանին կը վերաբերի,- ըսաւ ան: Ըստ ժամաժամի, կառավարութիւնը Լոյնանման մտածողութեամբ օժտուած կողմերով պէտք է կազմուած ըլլայ, որպէսզի կարենայ իր գործադիր իշխանութեան գործը կատարել առանց խնդրոտներու:

Խորհրդարանի Նախագահը Համեմատական Ընտրական Օրէնքի Կը Ըրաւ



Լիբանանի խորհրդարանի Նախագահ Նեպիի Պըրրի երէկ կը ըրաւ յառաջիկայ երեսփոխանական ընտրութեանց կապակցութեամբ համեմատական սկզբունքի վրայ հիմնուած ընտրական նոր օրէնք մը:

Պըրրի ղեմ արտայայտուեցաւ 1960-ի օրէնքին եւ շեշտը դրաւ արդիական ընտրական օրէնք մը ունենալու անհրաժեշտութեան վրայ:

Պաղ Կիման Կը Ծարուակով

Անցնող օրերու ծիւղամարտիկը, ըստ օդերևութաբանական տուեալներու, պիտի շարունակուի շարաքաղտը: Նշենք, թէ Չորեքշաբթի օր մինչ ծիւղամարտիկը փակած էր Լիբանանի լեռնային շատ մը ճամբաներ, անոյն Պէյրութի մէջ անձրեւի ողողումները առեւտի խնդրումներու պատճառ հանդիսացած էին: Այս տարուան անձրեւի ջուրի բանակը Նախորդ տարուան այս շրջանին հետ համեմատած աւելի բարձր է:

Շրջանային Լուրեր

Սալման Թագաւոր Զուլաջուց Իրանը

Սեւտական Արաբիոյ գահակալ Սալման Պըն Ապտուլազիզ յայտնած է, որ Սեւտական Արաբիան Եմէնի անվտանգութիւնը իր անվտանգութեան անբաժանելի մէկ մասը կը համարէ՝ անուղղակիօրէն զգուշացնելով Իրանը Եմէնի ներքին հարցերուն միջամուխ ըլլալէ, կը հաղորդէ «Ռոյթըրզ» գործակալութիւնը:

Եւ չենք ընդունիր, որ որեւէ երկիր միջամուխ ըլլայ անոր ներքին հարցերուն, կամ զայն օգտագործէ որպէս կերպար կամ տարանցիկ ճամբայ՝ վտանգի ենթարկելով Սեւտական Արաբիոյ եւ տարածաշրջանի անվտանգութիւնն ու խաղաղութիւնը,- ըսած է Սալման, առանց ուղղակիօրէն մատնանշելու Իրանը:

Նշենք, որ Սեւտական Արաբիան շարք մը արաբական երկիրներ ընդգրկող դաշնութիւն մը կը գլխավորէ, որուն Նապտակն է վերահաստատել Եմէնի Նախագահ Ապտու Աբապո Մանսուր Զատիի կառավարութեան իշխանութիւնը, որ Իրանի դաշնակից «Հուսի»-ներու ճնշմամբ մօտ երկու տարի առաջ աքտարաւար տեղափոխուած էր:

Յիշենք նաեւ, որ Սեւտական Արաբիան կը մեղադրէ Իրանը արաբական շարք մը երկիրներու մէջ իր իշխանութիւնը սփռելու մտադրութեան մէջ, ինչպիսիք են՝ Սուրիան եւ Եմէնը, սակայն Թեհրան կը հերքէ այդ փաստը:

Սեւտական Արաբիոյ գահակալի խօսքով, իր երկիրը մտադիր է համագործակցի միջազգային ուժերու հետ՝ աշխարհի վրայ խաղաղութիւն հաստատելու նպատակով:

Իսրայէլին Սպառնալը Մեծ Վտանգի Պիտի Ենթարկէ Իրանը. Կը Զգուշացնէ Նաթանիահու

Իսրայէլի վարչապետ Բենիամին Նաթանիահու Ուզպէստանի մայրաքաղաք Ապաթայի մէջ հանդիպում ունեցած է երկրի Նախագահ Նուրսուլթան Նազարպայեւի հետ, որուն ընթացքին յայտնած է, որ Իրանի կողմէ Իսրայէլը վերացնելու նպատակադրութեան մասին սպառնալիքները մեծ վտանգի պիտի ենթարկեն Իրանը: Այս մասին հաղորդած է իսրայէլեան ռատիօն:

Նաթանիահու ղեկավար Ուզպէստանի Նախագահ Նազարպայեւին, խնդրած է իր անունով իրանեան կողմին փոխանել յայտարարութիւն, որուն հիմամբ թէ վերջինս Իսրայէլի հանդէպ իր վերաբերմունքը չիփոխէ, Իսրայէլ նմանատիպ քայլերու պիտի ղիմէ, աւելցնելով, որ

«Իսրայէլ փոքր ու անկարող երկիր մը կամ նապաստակ մը չէ, այլ վագր է»:

Յիշենք, որ Նաթանիահու տոյն յայտարարութեամբ հանդէս եկած է ի պատասխան Իրանի Նախագահին կողմէ ինչպէս յայտարարութեան, թէ Իսրայէլ մինչեւ 25 տարի կրնայ վերանալ՝ պայմանաւ, որ պայքարն ըլլայ միասնական ու ամբողջական:

Միջազգային Լուրեր

Փութին Պաշտօնական Այցով Ճափոն Մեկնած Է

Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութին երկօրեայ այցով մեկնած է Ճափոն: Նախագահին ինքնակազմ վայրէջք կատարած է Զոնտու կղզիին վրայ, ուրիշ ան ուղեւորուած է Նակաթօ քաղաք՝ բանակցելու Ճափոնի վարչապետ Սինժօ Ապիտի հետ, կը տեղեկացնէ «ՏԱՍՍ»:

Քանի մը անդամներու մասնակցութեամբ, Փութին եւ Ապիտ ղեմ առ ղեմ գրոյց, ինչպէս նաեւ աշխատանքային ճակերոյթ՝ երկու երկիրներու յարաբերութիւններու զարգացման զբաղող առաջատար նախարարներու մասնակցութեամբ:

Այցի երկրորդ օրը՝ 16 Դեկտեմբերին, Փութին եւ Ապիտ, Թոքիոյ մէջ, համատեղ ձեռնարկներու պիտի մասնակցին: Քրեմլին յայտարարած է, որ Նակաթոյի եւ Թոքիոյ բանակցութիւններու ընթացքին

մեծ ուշադրութիւն պիտի դարձուի առեւտրա-տնտեսական յարաբերութիւններու ամրապնդման հարցը: Կ'ակնկալուի, որ Թոքիոյ բանակցութիւններէն ետք երկու երկիրներու ղեկավարներու ներկայութեամբ ստորագրուի շուրջ մէկ տասնեակ միջ-պետական փաստաթուղթեր, ինչպէս նաեւ 12-15 կարտերագոյն առեւտրային համաձայնագիրներ ու պիզնէսի ոլորտի շուրջ 50 այլ փաստաթուղթեր:

Հասան Ռոհանի Ընդհարուած Ե Պաշար Ասատը

Իրանի Նախագահ Հասան Ռոհանի հեռաձայնային կապ ունեցած է Սուրիոյ Նախագահ Պաշար Ասատի հետ: Ան շնորհաւորած է Ասատը՝ Հալէպի մէջ զինեալներու ղեմ տարած յաղթանակի առիթով, նշելով, որ այդ մէկը Միացեալ Նահանգներու նկատմամբ Իրանի համար յաղթանակ է: «Հալէպի յաղթանակը Սուրիոյ ժողովուրդի յաղթանակն էր ահաբեկիչներու եւ անոնց սատարողներու դէմ», - ըսած է Ռոհանին՝ ընդգծելով, որ Իրանը պիտի շարունակէ աջակցի Ասատին ընդդիմադիրներու դէմ պայքարին մէջ:

Հայրենի Լուրեր

Հայաստանի Մէջ Կը Սպասուի Խիստ Ցած Ջերմաստիճան. Որոշ Վայրերու Մէջ՝ -30... -35

Դեկտեմբեր 18-էն մինչեւ Դեկտեմբեր 20 Հայաստանի մէջ ոչ անձրեային եղանակ պիտի ըլլայ: Այս մասին կը տեղեկացնէ ՀՀ ԱԻՆ «Հիդրոմետ» ծառայութեան օդերևութաբանութեան կէտրոնի պետի տեղակալ Գագիկ Սուրենեան:



Անոր խօսքով, եղանակի պարզեցումով, ձիւնի ծածկի առկայութեամբ, ինչպէս նաեւ ցուրտ օդային հոսանքներու բուռն ներհոսքին հետեւանքով՝ Հայաստանի մէջ ջերմաստիճանը շատ պիտի նուազի:

Դեկտեմբեր 18-19-ին, յատկապէս գիշերները, ջերմաստիճանը պիտի նուազի եւս 8-10 աստիճանով: Մասնաւորապէս, Դեկտեմբեր 18 լոյս 19-ին Շիրակի, Կոտայքի, Արագածոտնի եւ Վայոց Ձորի լեռնային գոտիներու, Գեղարքունիքի մէջ օդի ջերմաստիճանը պիտի հասնի մինչեւ -30...-35, Արագածոտնի, Կոտայքի եւ Վայոց Ձորի Նախալեռներու մէջ՝ -18...-23, Արարատեան դաշտին մէջ՝ -18...-20, Լոռիի մէջ՝ -25...-30, Տաւուշի

մէջ՝ -15...-20, Սիւնիքի Նախալեռներուն մէջ՝ -20...-25, Սիւնիքի հովիտներուն մէջ՝ -12...-17, Արցախի մէջ՝ -13...-18 աստիճանի:

Երեւանի մէջ Դեկտեմբեր 18-19-ին կը կանխատեսուի -18...-20 աստիճան ցուրտ:

Գագիկ Սուրենեանի տեղեկութիւններով՝ առայժմ կարելի է յստակ խօսիլ միայն յառաջիկայ 5 օրուան տուեալներուն մասին:

ՀՀ Արտաքին Գործոց Փոխնախարարը Պելկրատի Մէջ Հակադարձած Է Ազրայէճանցի Գործընկերոջ Անհիմն Մեղադրանքներուն

Պելկրատի մէջ, տեղի ունեցաւ Սեւտական տնտեսական համագործակցութեան կազմակերպութեան (ՄՏՏԿ) անդամ երկիրներու Արտաքին գործոց նախարարներու խորհուրդի 35-րդ հանդիպումը, որուն ընթացքին ամփոփուեցան ՄՏՏԿ-ի մէջ Սերպիայի Հանրապետութեան 6-ամեայ Նախագահութեան արդիւնքները: Այս մասին կը տեղեկացնեն ՀՀ արտաքին գործոց նախարարութեան մամուլի, տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապի վարչութիւնը:

Նախարարական այս հանդիպման, իբրէն համագործակցութեան առաջնային ոլորտներ, նշուեցան տնտեսական զարգացումն ու առեւտուրը, զբօսաշրջութիւնը եւ արտակարգ իրավիճակները, մշակոյթն ու առողջապահութիւնը, գիտութիւնն ու ճարտարագիտութիւնները եւ այլն: Կարելոյ համարուեցաւ նաեւ ՄՏՏԿ գործունէութեան բարելաման անհրաժեշտութիւնը՝ հաշուի առնելով կազմակերպութեան հիմնարկային ներուժի արդիւնաւետ եւ նպատակային օգտագործումը:

Հայաստանի պատուիրակութիւնը կը գլխավորէր ՀՀ արտաքին գործոց նախարարի տեղակալ Աշոտ Յովակիմեան, որ իր ելոյթին մէջ նշեց, թէ անցեալ կէս տարուան ընթացքին Հայաստանը, մեկնելով ՄՏՏԿ կողմէն նոր ընդունուած տնտեսական ռազմավարութեան դրոյթներէն, ինչպէս նաեւ սեփական տնտեսական հետաքրքրութիւններէն, կը շարունակէ ջանքեր գործադրել տարբեր բնագիտութեան մէջ տարածաշրջանային ռազմավարութեան համագործակցութեան խթանման, կազմակերպութեան ծրագրային օրակարգի իրականացման, ներդրումներու խախուսման ուղղութեամբ:

Ի պատասխան Ազրայէճանի արտաքին գործոց նախարարի տեղակալ Մամուտ Մամադովի ելոյթին մէջ ինչեցուած անհիմն մեղադրանքներուն՝ ՀՀ արտաքին գործոց նախարարի տեղակալ Աշոտ Յովակիմեան նշեց, որ ՄՏՏԿ կազմակերպութիւնը քաղաքականացնելու փորձերը անթոյլատրելի են: Աշոտ Յովակիմեան ընդգծեց նաեւ, որ ՄՏՏԿ-ն այն հարթակը չէ, ուր ներքին զարգացման դրոյթները անհրաժեշտ են մեկնելու, կարելի է փորձել կատարել խելագործութեան ներկայացնել եւ քննարկման առարկայ դարձնել հարցեր, որոնք որեւէ կապ չունին կազմակերպութեան յանձնարարութեան հետ:

Սերժ Սարգսեանի Հրամանագիրով՝ Դեկտեմբերին Տեղի Կ'ունենայ ՀՀ ՁՈՒ Բժշկական Կազմի Զօրակոչ Եւ Զօրացում

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեան 15 Դեկտեմբերին հրամանագիր ստորագրած է Հայաստանի Հանրապետութեան Ձիւնած ուժերու պահեստազօրի առաջին խումբի բժշկական կազմի սպաներու զօրակոչ իրականացնելու եւ զօրացում կատարելու մասին:

Հայաստանի պահեստազօրի առաջին խումբի բժշկական կազմի սպաներու զօրակոչ իրականացնելու եւ զօրացում կատարելու մասին:

Այս մասին կը տեղեկացնէ ՀՀ Նախագահի աշխատակազմի հասարակայնութեան եւ տեղեկատուութեան միջոցներու հետ կապերու վարչութիւնը:

2. 2016 թուականի Դեկտեմբերին զօրացնելու սահմանուած ժամկետին Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերուն մէջ պարտադիր զինուորական ծառայութիւն անցած բժշկական կազմի սպաները:

ՀՀ Նախագահի հրամանագիրը. «Դեկտեմբերի 15-ի ՀՀ Նախագահի հրամանագիրով 2016 թվականի հոկտեմբերի 11-րդ յօդուածի 4-րդ մասով՝ կ'որոշեմ.

3. Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան՝ սոյն հրամանագիրը ուժի մէջ մտնելէն ետք, երկշաբաթեայ ժամկետի ընթացքին, ընդունիլ հրամանագիրին կիրարկումը ապահովող համապատասխան որոշում:

4. Սոյն հրամանագիրը ուժի մէջ կը մտնէ պաշտօնական հրապարակման յաջորդող օրէն:

Կապոյտ Յիշատակներ Հրդեհուած Մելգոնեանէն «Մելգոնեանցի ըլլալը չի՛ բացատրուիր, այլ՝ կ'ապրուի»

Մելգոնեանէն Մանրապատումներ

Թիւ 14 (Դ)

ՎԱՐԴԱԵՍ ԳՈՐԾՈՒԹԵԱՆ

Մեր Սափրատունը

Մանչերու շէնքին վարի յարկին միջանցքին հիսուհուային ծայրամասը ներկրուած ապակիով փոքր սենեակ մը յատկացուած էր սափրատան:

Մելգոնեանի սկզբնական տասնամեակներուն, կրթական ծրագիրին քով կային նաեւ արհեստանոցները, ուր կարգ մը տղաք ու աղջիկներ գանազան արհեստներ կը սորվէին ապագային գործածելու համար: Դերձակութիւն (մանչերու), կարուճեւ (աղջիկներու), ատղձագործութիւն - կահագործութիւն, կոշակակարութիւն եւ մեքենաշինութիւնը մաս կը կազմէին այս արհեստից վարժարանին: Այն աշակերտները (որբերը), որոնք դժուարութիւններ կ'ունենային Զաստատութեան կրթական ծրագիրին հետեւելու, կրթական թեթեւ ծրագիրի մը զուգահեռ, արհեստագիտական այս ճիւղերուն մէջ գործնական գիտելիքներ ամբարձրելով, կրնային իրենց ապագան եւ ընտանիքին ապրուստը ապահովել: Տակաւին, շատ մը աշակերտներ իրենց փափաքով արհեստից վարժարան կը յամբիւրդէին (ասոնք՝ խելացի - ճարտիկներն էին, որոնք կենսեան մէջ շատ աւելի լաւ նիւթական եկամուտ ապահովեցին քան իրենց ուսուցիչ դարձած դասընկերները ...):

Մանչերուն մագերէտ սափրելու համար, սկզբնական շրջանին քաղաքէն սափրիչ մը կու գայ եղեր եւ տղոց մագերէտ կը սափրէ: Պատասխանատուները կ'անդրադառնան, որ սափրիչութիւնն ալ արհեստ է, եւ ուրեմն այդ սափրիչներուն կը յանձնարարեն քանի մը տղոց սափրիչութիւն սորվեցնել: Երբ եւ 1962-ին Մելգոնեան գացի, ամէն Չորեքշաբթի կամ Զինգաշաբթի օրերը քաղաքէն հայ սափրիչ մը կու գար եւ մինչ տղաքը մեր մագերէտ կը սափրէին, ինք ուղղութիւն կու տար: Մեծերուն ինք կը սափրէր, իսկ վարի կարգերուն՝ տղաքը, իր հսկողութեամբ:

Մեր մագերէտ երբեմն տարօրինակ ձեւեր կ'ունէին: «Հոգ չէ» կ'ըսէին աշակերտ սափրիչները. «Երբ որ մագերէտ երկնանս, կը շտկուին»: Լիբանանցիները սովորութիւնն ունէին ալ ունէին: Երբ սափրուէիր եւ վերջանար, ծոծրակիդ աղուոր, ձայնաւոր ապտակ մըն ալ կ'ունէիր եւ «անուշ ըլլայ» ըսելով քեզ ճամբու կը դնէին:

Այսօրուան երիտասարդութեան մագերէտ արտառոց ձեւերը թե՛ այն ժամանակ ըլլար, տղաքը դժուարութիւն չէին ունենար անոր եւ աւելի արտառոց ձեւեր հնարելու: Պէյրութիները կը յիշեն, որ ժամանակին «մթովիները» երբ Պէյրութ գային աշխատելու, իրենց սափրիչները կարծես մեծ եւ խորունկ պնակ մը (թաս) մարդուն գլխուն վրայ կը դնէին եւ ինչ մագ որ «թաս»էն դուրս կը մտար՝ կ'ածիլէին: Հիմա, այդ ձեւը սորոյթ է: Վա՛յ ես ձեր կապիկի ճաշակին ... (այսպիսով, հիմակուայ տղաքը բաւական մը կապիկի նմանելով, Տարուիի «Յեղաշրջման Տեսութիւն»ը (Evolution Theory) մասամբ մը կ'ապացուցուի եւ կը փաստուի, որ ոմանք կապիկներէն սեռած են):

Քանի որ տակաւին սափրուելու ելեւտրականացած մեքենաները չէին ստեղծուած, մեր ծոծրակի մագերէտ կը կորէին մատներով աշխատող գործիքներով: Եւ քանի որ այդ գործիքներուն «մկրատները» բթացած էին, սափրուողները միշտ «ախ», «ուխ»ով, ցաւելով կը սպասէին գործողութեան ամարտին: Կարգ մը «սափրիչ»ներ ալ գիտակցաբար մագերէտ կտրած ժամանակ մեքենան շուտ եւ կը քաշէին, որպէսզի սափրողուողը ... քիչ մը աւելի ցաւի: Պատանիներ էինք եւ կը սիրէիք գիրար «կամբել»: Եւ քանի որ մեր ընկերութիւնները շատ մտերիմ էին, նման կատակներ «կը տանէիք»:

Սափրատան մէջ մտերմիկ «խորհրդաձուլութիւններ» ալ տեղի կ'ունենային, մանաւանդ ձմրան անձրեւոտ օրերուն: Շատ աղուոր տաքով մթնոլորտ մը կար իրեն: Տղաքը «անուշ-անուշ» կը խօսէին իրենց սերերէն, յուսախաբութիւններէն, երազներէն: Ընկերային այդ մաքուր մթնոլորտին մէջ ամէն տղայ «հոգեբան» էր եւ իրարու ցաւերուն «դարման» եւ երազներուն թռիչք կու տային: Գե՛մ կարծե՛ր, որ այսօրուան վկայեալ հոգեբաններէն ոմանք կարենային այդ հարցերուն ճիշդ պատասխանները կամ դարմանները տալ այն շերտութեամբ եւ անկեղծութեամբ՝ ինչպէս մենք կ'ընէիք իրեն:

Սափրատան պատուհանը կը գործածուէր նաեւ փախուստի համար: Գիշերները, երբ քաղաք կամ քեպագափ փախած տղաքը վերադառնային, շէնքին դռները կը կոպուած կ'ըլլային: Նախապէս եղած կարգադրութեամբ մը, «պահակ» աշակերտ մը սափրատան դռնն ու պատուհանը կը բանար եւ տղաքը ներս կը մտնէին: Սափրատան պատուհանը ճիշդ Բարեբարներու դարձանքի կը նայէր, դիւանակահին ցած էր եւ հետեւաբար դիւրին էր ելեւմուտքը: Կը պատահէր, որ պատուհանը այնպէս մը կը «գոցէին» որ հագիւ դպնայիր, կը բացուէր:

Սափրատունը, մանաւանդ անձրեւոտ օրերուն, կարգ մը տղոց համար կը ծառայէր նաեւ որպէս «խնկարկու՛մի» սենեակ: Հերթապահներէն շատեր գիտէին այդ, բայց չգիտնալու կու գային:

Չեմ գիտեր թե՛ այդ սափրատունէն «շրջանաւարտ» աշակերտներէն ո՞րք էինք մեկը ապագային սափրիչութիւնը որպէս արհեստ ընտրե՞ց թէ ոչ:

ՄԿՅ-ն Եւ Լիբանանի Քաղաքացիական Պատերազմը

1974-ին Պէյրութ գացած էի, Ամերիկեան Զամալսարանին մէջ, ամառնային դասընթացներով մանկավարժական ճիւղին մէջ Մագիստրոսական ուսում ստանալու: Այդ ամառ Կիպրոսի մէջ տեղի ունեցաւ պատական յեղաշրջումը, որուն յաջորդեց թրքական յարձակումը եւ Կիպրոսի հիւսիսային կողմի գրաւումը՝ թրքական զօրքերուն կողմէ: Նախքան մեր Կիպրոս վերադարձը, Արթիւր Վայիճեանին հետ գաւաթ մը ուխտի խմելու համար Զամրայի վրայ գտնուող «Հօթել Զոմոտոր» գացիքը: Տերմ խօսակցութիւններէ տեք, Արթիւրը ինձի պատուիրէր. -«Ճնորդ, եղբայր, ով որ ունիս հոս միասին Կիպրոս տար, թե՛ չես կրնար, ինչ դրամ որ ունիս տուր իրեն եւ պատուիրէ որ տուփեղէն եւ չարուող ուստետեղէն գնեն՝ ալիւր, շաքար, ոսպ, բրինձ, փոշի կաթ եւ այլն, քանի որ Զոնտեմբերին հոս այնպիսի քաղաքացիական պատերազմ մը պիտի սկսի, որ 1958-ի կռիւները բիջնիքի պիտի նմանին»: Զաւանաբար, ըսի, ասիկա Արթիւրին չափազանցութիւններէն մէկն է: Զոնտեմբերը եկաւ ու անցաւ, բայց բան չպատահեցաւ: Քանի մը ամիս տեք, Արթիւրին, ինչ-ինչ պատճառներով, քաղաքացիական պատերազմը սկսաւ եւ 15 երկար տարիներ արիւնաքամ ըրաւ Լիբանանը:

Լիբանանի քաղաքացիական պատերազմին պատճառով, Մելգոնեան դիմողներու թիւը բազմապատկուեցաւ: Գլխաւորաբար Յովակիմեան-Մանուկեանէն, Դարուիի Յակոբեանէն եւ Թեքեան վարժարանէն մեծ թիւով աշակերտներ եկան Մելգոնեան, ապահով միջաձայնի մէջ ուսում ստանալու:

1978-1979 կրթաշրջանին, Մելգոնեանի ուսանողութեան ճիշդ կէտը լիբանանցի նորեկներն էին - 111 վերադարձող աշակերտներ եւ 111 նորեկներ:

Նորեկ աշակերտներէն շատերը քա-

ղաքացիական կռիւներուն զէնք ալ բռնած էին՝ հայկական թաղերը պաշտպանելու: Անոնց համար «Քլաշնիքով» թէ «M-16», «RPG» թէ «Machine gun», ձեռնառումբերու տեսակներն ու փոքր զէնքերը գաղտնիք չունէին: Անգլերէն դասի մէկ պահուն, Պրն. Թէյլըը, նորեկ Պէյրութցիներուն անգլերէնագիտութեան մակարդակը ճշդելու համար կը հարցնէ. - "With what do you brush your teeth?", "with machine guns" կ'ըլլայ Պէյրութցիին պատասխանը ... Մարդը սարսափած ուսուցչարան եկաւ եւ սկսաւ բողոքել: Զակցուցիցք իրեն որ լաւ կ'ըլլայ եթէ հարցը անտեսէ, քանի որ այս պատանիները աւելի քան երկու տարի միայն զէնք տեսած էին եւ ռումբերու պայթումները իսկացուցած էին անոնց ականջներն ու ուղեղները:

Շաբաթ երեկոյ մը, Տիկ. Հերմինէ Պէքարեանի կարգադրութեամբ, արեւուշներն ու արիւնքը անպաշտօն խարուկահանդէս մը կը կազմակերպեն: Ես այդ գիշեր հերթապահ չէի: Մեր տունը տնօրէնի վիլլայէն վար, Լիմասոի ճամբուն վրայ գտնուող տունն էր: Քանի որ յոգնած էի եւ կիրակի առտու ալ հերթապահութեան օրն էր, որոշեցի խարուկահանդէսին չերթալ: Անպաշտօն էր, Հերմինէն կրնար ղեկավարել, մանչերու հերթապահան ալ հոն պիտի ըլլար, այնպէս որ հարց չկար:

Ժամը 10:00-ի կողմերը երկու տղաք շնչասպառ տանս դուռը գարկին եւ «պարոն, շէնքին մէջ մեծ կռիւ կայ, հերթապահը ըսաւ որ անմիջապէս գաք» ըսին: Արագ մը գացի: Ուրեմն, խարուկահանդէսի ժամանակ պէյրութցի նորեկ աշակերտները իրք թէ սկստական խմբային երգերուն պիտի մասնակցին, կը սկսին խանգարել, կապիկութիւններ ընել, եւ բարկացնել Տիկ. Պէքարեանին: «Նախկին» Մելգոնեանցիները, քանի մը անգամ կ'ըզգուշացնէն այս, որ հանգիստ մնան եւ խարուկահանդէսը չխանգարեն: Պէյրութցի «գայիմարը» կ'արհամարհեն տղոց զգուշացումները եւ կը շարունակեն միմտանութիւններով եւ ծաղրանքներով խանգարել խարուկահանդէսը: Ասոր վրայ, հինները նորերուն կ'ըսեն, որ «երբ որ շէնք երթանք, ձեր հաշիւը պիտի քորքերենք»: Չեն որ երբ արջիկներն անջեւ քանի մը ուռի կրակին մէջ նետել... Շենք վերադարձին, խանգարող տղաքը 11-րդ դասարան կը հաւաքուին եւ գրասեղանները դուռնի տեսել լեցնելով կ'ուզէն պաշտպանուիլ: Հինները, Ռաֆֆի Արապեանին եւ Մեսրոպ Կարոյի ղեկավարութեամբ, աստիճաններով պատուհանէն ներս կը մտնեն, կը յաջողին դուռը բանալ եւ միւս տղոց հետ՝ «տուր թէ կու տայ... Հերթապահին հրահանգները որ կռիւը կեցնեն՝ ապարդիւն: Նորեկները փառաւոր ծեծ մը կ'ունեն: Քանի մը հոգիի քիթը արիւնած էր, որիշխներու տեսողութիւնը եւ յստոթիւնը ժամանակաւորապէս խանգարւած, ոմանք ձեռքերը եւ ոտքերը ճնշեցին: Եւ այլն: Այդ պահուն եւ հասայ եւ որպէս Պէյրութցի՝ Ձեւով Օհանի ձայնով, զգպեցի տղոց: Կեցան: Հինները բացատրեցին, որ ինչո՞ւ կռիւի սկսած են: «Հոս Մելգոնեան է, ըսի, ան որ կը համարձակի մեր ձեռնարկները խանգարել, մեզի պատասխան պիտի տայ: Այս տղաքը դաս մը կ'ուզէին եւ հիմա գիտեստակ խաղեր չեն խաղար»: Ուրախ էի եւ հպարտ, որ հինները արդէն պատրաստ էին արեան գինով պաշտպանելու Մելգոնեանի սրբութիւնները: Սակայն, չէիք կրնար կարգապահական օրէնքներ խախտել: Երկու «կողմերուն» հանդիմանութիւններ եւ խրատականներ ետք, խոստացան ինձի որ պիտի չշարունակեն կռիւը: «Նստեք եւ մարդու պէս խօսեցեք եւ բացատրուեցեք, մեծ տղաք էք,

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



Ուրախութեամբ կը յայտարարենք, որ առաջնորդ Սրբազան հօր եւ Ազգային վարչութեան համատեղ ջանքերով, Ազգային առաջնորդարանը

սկսած է արդէն փակել ազգային վարժարաններու ուսուցիչներու, անձնակազմերու նկատմամբ ունեցած իր նիւթական պարտաւորութիւնները, ինչպէս նաեւ՝ այլ յետնեալ պարտքերը:

Այս նախաձեռնութեամբ, ամբողջականօրէն գործադրութեան հունի մէջ կը մտնէ Լիբանանի Թեմի Ազգային երեսփոխանական ժողովին որդեգրած որոշումը՝ Ազգային միացեալ վարժարանի 2017-2018 կրթական վերամուտէն առաջ փակելու նիւթական պարտաւորութիւնները՝ միաւորուած, ինչպէս նաեւ գործող բոլոր ազգային վարժարաններուն:

Այս քայլով Ազգային առաջնորդարանը կու գայ, միանգամընդմիջտ, տալու արմատական լուծում 21 տարիներէ ի վեր կուտանուած նիւթական պարտքերու թղթաճարարին, որ գոյացած է Լիբանանի տնտեսական տագնապի, կըրթական ֆոնտերու նստարացման, ինչպէս նաեւ այլ առարկայական ու ենթակայական պատճառներով: Այստեղ պետք է հաստատել, որ վերջին շրջանին, առաջնորդարանը արդէն իսկ հիմնական դերակատար դարձած է ազգային կարգ մը վարժարաններու պիտոճեական հասարակչութեան ստեղծման ճիգերէն՝ կատարելով մեծագումար յատկացումներ:

Կ'անկախալեցնէ, որ հայ դպրոցին հանդէպ այս գուրգուրոտ վերաբերմունքը եւ յետնեալ նիւթական պարտաւորութիւնները կատարելու ազգային առաջնորդարանի վճռական որոշումը, որ անշուշտ կ'ենթադրէ մեծագումար նիւթական ներդրում, դառնայ ուշադրութեան կարելի որ առանցք, եւ կրթական պատասխանատուներ՝ տնօրէնութիւններ, ուսուցչական կազմեր, ինստիտուցիաներ, ինչպէս նաեւ ծնողներ ու հայկական դպրոցին նեցուկ հանդիսացող բարերարներ ու բարեկամներ համատեղ ճիգով ու յանդիմանով աշխուժութեամբ զօրակցին ազգային վարժարաններու պայծառակերտման ու անոնց ճառագայթումին նպաստող բոլոր քայ-

լերուն ու ծրագիրներուն որդեգրման ու գործադրութեան: Աւելին, Ազգային առաջնորդարանը հետամուտ է ստեղծելու եկամուտի մնայուն աղբիւրներ, որպէսզի ազգային վարժարաններու պիտոճեական հաւասարակշռութիւնը այլեւս դուրս գայ մնայուն մոճաւանջ ստեղծող կացութենէն ձեռքազատուի եւ առիթ ընձեռէ, որ կրթական համակարգը օժտուի արդի, ժամանակակից նոր կարելիութիւններով ու միջոցներով:

Ազգային միացեալ վարժարանի համար 25 Նոյեմբեր 2016-ին կազմակերպուած հանգանակային ճաշկերոյթը ստեղծեց լայն խանդավառութիւն, եւ գոյացած հատուցեալ եկամուտը յաւելեալ փաստ մը, որ լիբանանահայ գաղութը իր բոլոր շերտերով մեծապէս կը գնահատէ հայկական դպրոցին դերակատարութիւնը՝ նորահաս սերունդներու հայրենի դաստիարակութեան, մարդակերտումի ու ապագայ մարդուժի պատրաստութեան առումով:

Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն՝ յաւելեալ յանձնառութեամբ, համոզումով ու գիտակցութեամբ կառչելու հայկական դպրոցի առաքելութեան եւ նեցուկ կանգնելու արդէն իսկ կրթական հարուստ կենսափորձ նուաճած ազգային վարժարաններու դերակատարութեան շնչատարման, որ ինքնին կարելու գործօն է գաղութային կենսեղի ուժեղացման եւ նպատակասլաց երթին:

Բոլորս միասնաբար՝ պարտաւոր ենք լարելու մեր ճիգերը, համակելու մեր միջազայրը հայեցի կրթութեան շունչով ու հաւանքով, որպէսզի մեր առօրեային մէջ հայկականութիւնը դառնայ մնայուն ու տիրական ներկայութիւն, կարելի ըլլայ երաշխաւորել մեր հոգեմտաւոր արժեքներու պահպանումը ու անխախտ պահել լիբանանահայ գաղութին համահայկական դերակատարութիւնը: Հայկական դպրոցի պահպանումն ու զարգացումը մեզի համար պետք է շարունակեն մնալ ռազմավարական խնդիր ու անոր յառաջընթացին համար պետք չէ խնայել ճիգ ու ներդրում:

Լիբանանի ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

մանաւանդ մելգոնեանցի, հինները պիտի բացատրեն եւ օգնեն նորեկներուն, նորեկներն ալ մտիկ պիտի ընեն եւ հնազանդին: Այս՝ մեր աւանդութիւնն ու օրէնքն է՝ ըսի:

Երկուշաբթի կարգապահական յանձնարումը իր ժողովը ունեցաւ: Կռիւի հարցը շատ լուրջ էր, կրնար մինչեւ վտարում երթալ, սակայն ես հարցին ներքին գեղեցկութիւնները բացատրելով, պնդեցի որ պարագադարարութեամբ մը գոցենք հարցը:

Ազդարարագիրները նախքան տղոց տալս, նախ շնորհաւորելով զնահատեցի տղոց «մելգոնեանցիական» ոգին, խրատեցի որ նման բան չպատահի եւ ժպիտը դեմքիս, իրենց յանձնեցի ազդարարագիրները: Հերոսացած տղաքը նոյնպէս ժպիտով ընդունեցին իրենց ինկած «պատիժ»ը եւ խոստացան նման հարցեր չստեղծել:

Պետք է ըսել, որ այդ կռուող տղաքը շատ լաւ եւ մտերիմ բարեկամներ եղան: Իսկ «նորեկները» շուտով դարձան Մելգոնեանի պատիւին խիստ պաշտպաններ: Ծեծը որ կերած էին, մաքրած էր անոնց հոգիները ...

Մելգոնեանը, Լիբանանի քաղաքացիական կռիւներուն ժամանակ, դէպի Միացեալ Նահանգներու ճամբուն վրայ հանգրուան մըն էր: Սակայն, կարգ մը աշակերտներ, կը նախընտրէին հոն մնալ, ասարտել դպրոցը եւ յետոյ երթալ միանալու իրենց ընտանիքներուն: Որքան երկարեցաւ պատերազմը, այնքան սկսան անպատրաստ աշակերտներ գալ մեզի: Պէյրութի մէջ կանուտար դասաւանդութիւններ չունէին խեղճերը, եւ իրենք յանցաւոր չէին: Անգամ մը Պրն. Պետեանը ինձի ցոյց տուաւ մուտքը ընկութեան արդիւնքները: Սարսափելի

էին: Նիշերը 20-60-ի միջեւ կը տատանէին: Մէկ կամ երկու հատ 70-ի վրայ կիշ կար: Եւ քանի որ պատերազմի սարսափները կային, ինչպէս նաեւ Պէյրութի Բարեգործականի եւ Ռամկավարներու ղեկավարներէն յանձնարարագիրները, ստիպուած էիք ընդունիլ բոլորը: Հիսուսիք այս աշակերտներուն կարգապահական ըմբռնողութեան մասին: «Կարգապահութիւն» ի՞նչ է, չէին գիտեր: Կարելի էր, իրենց համար, բռնի ուժով ամէն հարց լուծել: Եւ քանի որ ասոնցմէ ոմանք հայկական թաղերու մէջ պահպանութիւն ալ ըրած էին, զինք բռնած էին, ուրեմն իրենք «առանձնաշնորհեալներ» էին, կամ պետք էին ըլլալ: Սկզբնական դժուարութիւններէ տեք, գրեթէ բոլորն ալ սկսան համակերպուի գիշերօթիկի պայմաններուն եւ լաւ, կարգապահ աշակերտներ ըլլալ: Պետք է ըսել նաեւ որ քանի մը ամիս տեք, այս աշակերտները շուտով կը վարժուին ինչպայային, եւ մեծ աշակերտներու օգնութեամբ, շատ կը բարելուէին իրենց կրթական մակարդակը: Երկրորդ տարին արդէն հարց չէր մնար:

Քանի որ Լիբանան պատերազմի մէջ կանուտ էր, Մելգոնեանի հոգաբարձութիւնը, Պրն. Պետեանին առաջարկով եւ Բարեգործականի Կեդրոնի հաւանութեամբ, Լիբանանցի աշակերտները մամաները սկսան Զաստատութեան մէջ պահել: Կարգ մը տղաք Նիկոսիոյ հայ գործարարներուն քով գործ գտան եւ ամէն օր քաղաք կ'երթային եւ քիչ մըն ալ դրամ կը շահէին: Հեթապահներուն ըսեցաւ որ «քանի որ 12 ամիս կը վճարուիք, ուրեմն ամրան ամիսներուն ալ «կամաւոր կերպով հսկողութիւն պետք է ընէք»:

Էջ 03



Պատմութեան Մէջ Այսօր

Գեորգի (Եւրոյի) Վասիլեւիչ Սուլիքիտով

Գեորգի (Եւրոյի) Վասիլեւիչ Սուլիքիտով (16 Դեկտեմբեր , 1915 - 6 Յունուար , 1998), խորհրդային երգահան եւ երաժշտական-հասարակական գործիչ: ԽՍՀՄ ժողովրդական արուեստագետ (1970): Ընկերվարական աշխատանքի հերոս (1975):

1941 թուականին ավարտած է Լենին-կըրատի երաժշտանոցի երգագրութեան բաժինը: 1962-1974 թուականին եղած է ԽՍՀՄ երգահաններու միութեան վարչութեան քարտուղար, միաժամանակ ՌԽՖՍՐ երգահաններու միութեան վարչութեան առաջին քարտուղար 1968-1973 թուականին: Երգահանի ստեղծագործական

անհատականութեան ինքնատիպութիւնը առաւել վառ ձեւով դրսեւորուած է ձայնական երաժշտութեան մէջ: Աւետիք Իսահակեանի («Հայրերի երկիրը», 1950), Ռ. Պիոռնսի (երգերի շարք, 195

ԹՄՄի Լուրեր

Կլենտեյլ - Լուս Անճելլո

Հրապարակային Գնահատանք Վահրամ Մավեանի 90-Ամեակին Առիթով (1926-1983)

ԱՐԱ ԱՅՈՐՈՒՆԵԱՆ
«Չարթոն»-ի Երեք Աշխատակից

Գրասեր բարեկամներու ընտրանի մը հաւաքուած էր Կիրակի, Դեկտեմբեր 4-ին, ԹՄՄ Պէշկեօթիւրեան կեդրոնին մէջ, ներկայ գտնուելու ԹՄՄ Լուս Անճելլոյ մասնաճիւղի կազմակերպած Վահրամ Մավեանի ծննդեան 90-ամեակին նուիրուած գրական հանդիպումին, որ միեւնոյն ժամանակ կը համընկնէր իր անժամանակ մահուան 33-րդ տարելիցին:



Գարթալեան ընթերցումներ կատարեց լոնտոնաբնակ, այժմ՝ կիպրոսեան Գերոգ Մալիքեանի եւ կիպրոսեան Վարդան Թաշճեանի կողմէ յղուած գնահատագիրներէն. ապա կարդաց Կարո Այալթունի խօսքը՝ վերջինիս ակամայ բացակայութեան պատճառով:



Երաժշտական ելոյթով հանդէս եկաւ Արման Ստեփանեան, որու սրինգով կատարումը ներկաներուն բարձր գնահատանքին արժանացաւ: Մասնաճիւղի երկարամեայ վարչական Տիգրան Էքիզեան գեղեցկօրէն ձայնապնակի վրայ պատրաստեց Եր Վահրամ Մավեանի կատարումները՝ անոր կարգ մը բանաստեղծութիւններուն: Զեղինակին յստակ ձայնն ու կատարումը հիացմունքի արժանացան: Պետք է նշել, որ բեմին վրայ գետեղուած էր Մավեանի մեծ դիմանկարը: Լուսանկար՝ Պենոն Սեւեանի, որ ատենին աշակերտած էր Մավեանին:

Յայտագիրը ընթացք առաւ վարչութեան փոխատենապետ Բարսեղ Գարթալեանի բացման խօսքով, որու ընթացքին ան հակիրճ կերպով ներկայացուց Վահրամ Մավեանի կենսագրութիւնը, ապա կարդաց ատենին Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսին ու Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան կողմէ Մավեանին ուղղուած գնահատագիրները:



Գարթալեան ընթացք տուաւ յայտագիրին, ու երաժշտական ելոյթով հանդէս եկաւ քանոնի վրայ արուեստագիտուհի Լիլիթ Խոճայեանը, սրնգահար Արման Ստեփանեանի ընկերակցութեամբ: Ապա սրտի խօսքով առաջին հերթին արտայայտուեցաւ Մելգոնեան Կրթարանի նախկին ուսանող Մեսիլ Բէշիշեանը: Մավեան մօտիկ բարեկամը եղած էր Տոքթ. Գերոգ եւ Մեսիլ Բէշիշեաններուն: Զաճելի յուշերու անդրադարձումով ան հարագատօրէն եւ յուզումով ներկայացուց Մավեանի դաստիարակն ու մտերմիկ բարեկամը:



Գաղութիս ծանօթ ասմունքող Մելո Էքիզեան ալ Կիպրոսի մէջ աշակերտած էր Մավեանին. ան հանդէս եկաւ սրտի յուզումալի խօսքով, յիշելով սիրուած դաստիարակին նուիրուածութիւնը իր աշակերտներուն եւ ուսուցանած հոգեբանութեան հանդէսը:

Գնահատանքի վերջին խօսք առնողը եղաւ մասնաճիւղի ատենապետ, հրապարակագիր Վաչէ Սեմերճեանը, որ մօ-



տեն ճանչցած էր Մավեանը, որպէս 1961-63 տարիներու պաշտօնակիցը Մելգոնեանէն ներս եւ որպէս մտաւորական բարեկամ: Սեմերճեան մանրամասնութիւններ փոխանցեց Մավեանի հրատարակած չորս հատորներուն բովանդակութեան ու սփիւռքահայ գրականութեան մէջ անոնց թողած գեղարուեստական արժեքին մասին: Ան շեշտեց անգլահատեղի ներդրումը, գործերը բերել էր Սփիւռքի հասարակական ու գրական կենտրոն մէջ, մասնաւորաբար, որպէս Կիւպրոսեան Հաստատութեան պաշտօնէջ՝ իր պաշտօնավարութեան քսան տարիներուն (1963-1983) ընթացքին: Սեմերճեան Մավեանի ամբողջ գրականութիւնը նկատեց Սփիւռքի հոգեբանութեան հարագատ արտայայտութիւն:



Իսկական գնահատանքի միջոցառում մըն էր շնորհալի բանաստեղծ, բեղուն արձակագիր եւ հասարակական իմաստուն գործիչ Վահրամ Մավեանին ծննդեան 90-ամեակին նուիրուած այս ձեռնարկը:

Մշակութային Արձագանգ

Թուրքիոյ Մէջ Հրուշակագործութեան Աւանդոյթի Հիմնադիրները Համշէնցի Հայերն են

Թուրքիոյ մէջ հրուշակագործութեան ավանդոյթի հիմնադիրները ու մինչեւ այսօր այդ ավանդոյթները պահպանողները համշէնցիներն են, կը պնդէ ծնունդով Թուրքիոյ Ռիպէ Նահանգի Համլըհեմէշին շրջանէն լրագրող, լուսանկարիչ, «Պանդուխտ թխուածքը» գիրքի հեղինակ Ուլուր Պիրեօլը:



Թրքական Gazeteduvar.com.tr կայքին հետ զրոյցի ընթացքին Պիրեօլը պատմած է համշէնցի հայերու մէջ հրուշակագործութեան ծագման ու զարգացման մասին:

«Մեր ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, որ 19-րդ դարուն շուրջ 186 համշէնցի ընտանիք զացած է Ռուսիա եւ Լեհաստան, իւրացուցած է հրուշակագործութեան հմտութիւններն ու հայրենիք վերադառնալով՝ այստեղ զարգացուցած այդ ավանդոյթները: Անշուշտ որ, անոնք այս գործը ոչ թէ Համշէնի, այլ մեծ քաղաքներու մէջ կ'ընէին: Սթամպուլի մէջ առաջին հրուշակեղէնի խանութներու հիմնադիրները պոլսահայերն ու յոյներն էին, իսկ բուն Անատոլիոյ քաղաքներ հրուշակագործութիւնը բերողները համշէնցիները եղած են», -tert.am-ի փոխանցմամբ՝ կը պատմէ լրագրողը:

Նշենք, որ համշէնցիներու առաջին բնակավայրերը ստեղծուած են 8-րդ դարուն: Հայ պատմիչներէն Դեռնոնը կը յիշատակէ, որ Արեւելեան Հայաստանի

մէջ արաբական նուաճողներու ճնշումներէն ազատելու համար 10-12 հազար հայ, Շապուրի եւ անոր որդի Համամ Ամատունի իշխաններու զխաւորութեամբ, կ'արտագաղթեն Բիւզանդիա: Ի դէպ՝ պատմական Համշէնը կը գտնուի ժամանակակից Թուրքիոյ հիւսիս-արեւելքը: Համամ Ամատունի իշխանի հիմնած Համամաշէն քաղաքը քարտեզի վրայ կարելի է գտնել Հեմշին թրքերէն անուամբ, ատկէ քիչ մը դէպի արեւելք կը գտնուի թրքախօս համշէնցիներու եւս մէկ բնակավայր՝ Չամլըհեմէշիը (կը թարգմանուի որպէս եղեւտոտ Համշէն): Իսկ կրօնական եւ ազգային հայածախքներու հետեւեւեցով բուն Համշէնէն դէպի Խոփա, Օրտու, Կիրեսուն եւ Սամսոն արտագաղթած համշէնցիներու բազմաթիւ գերդաստաններ հայերէնը պահպանեցին ընդհուպ մինչեւ 20-րդ դարու 80-ականներու վերջը: Խոփայի շարք մը գիւղերու մէջ համշէնցիները սահուն կերպով հայերէն կը խօսին մինչեւ այսօր:

Լեհաստանի Մէջ Բացուած Է Հայկական Մշակոյթի Նուիրուած Ցուցահանդէս

Դեկտեմբեր 6-ին, Լեհաստանի Զիեյց քաղաքի Ազգային թանգարանի միջմշակութային երկխօսութեան բաժնին մէջ, բացուած է «Հայկական արուեստանոց-մանրուքներու արուեստը» խորագիրով ցուցահանդէսը: Կազմակերպիչն ու նախաձեռնողը թանգարանի պատմութեան բաժնի ղեկավար ու հայ մշակոյթի մեծ սիրահար Պաւլ Զեշչիկն է:



Ցուցահանդէսին, ըստ «Հայերն այսօր»-ի, ներկայացուած են հայկական մշակոյթը խորհրդանշող ինքնատիպ նմոյշներ՝ գորգեր, գօտիներ, գէնքեր, ինչ ձեւագիւղեր եւ հայապատմութեան ներքին ինչպէս նաեւ՝ հայկական միջնադարեան ճարտարապետութեան նուիրած լուսանկարներ, որոնք Պաւլ Զեշչիկ անձամբ նկարած է Հայաստանի մէջ:

Մշակոյթի եւ ժառանգութեան հիմնադրամէն:

Պաւլ Զեշչիկի խօսքերով՝ հայկական պատմութիւնն ու մշակոյթը շատ հարուստ են եւ ինքնատիպ: Անոնք իրենց ազդեցութիւնը ձգած են նաեւ Լեհական մշակոյթին վրայ: «Հայկական արուեստանոց-մանրուքներու արուեստը» խորագիրով ցուցահանդէսով՝ թանգարանի պատմութեան բաժնի ղեկավարը՝ փափաքած է այցելուները հաղորդակից դարձնել հայկական արուեստին ու մշակոյթին:

Ցուցադրուող նմոյշները հաւաքուած են Զիեյցի եւ Զարալայի ազգային թանգարաններէն, Վարշաւայի Թագաւորական ամրոցէն եւ Ազգային գրադարանէն, ինչպէս նաեւ՝ Վարշաւայի մէջ Լեհահայերու

Լեհաստանի արուեստանոց-մանրուքներու արուեստը» ցուցահանդէսը պիտի գործէ մինչեւ 2017-ի Մարտ 12:

Շնորհակալ Նախաձեռնութիւն

Լեւոնարտո Տի Զափրիոս «Հայաստանի Մանուկներ» Հիմնադրամին Մեծ Գումար Նուիրաբերած Է



Հովիվուտեան օսկարակիր դերասան Լեւոնարտո տի Զափրիոս բաւական մեծ գումար հանգանակած է «Հայաստանի մանուկներ» հիմնադրամին, կ'ըսուի վերջինիս ֆէյսպուքեան (facebook) էջին մէջ:

Նշենք, որ «Հայաստանի մանուկներ»-ը հիմնադրուած է 2000 թուականին Լիւ Երրքի մէջ Կարօ Արմէնի կողմէ: Հիմնադրամի գործունեութիւնը միտուած է Հայաստանի կարիքաւոր գիւղական բնակավայրերու մէջ երեխաներու համար բարեկեցիկ ապագայ կառուցելուն:

Կը հաղորդուի, որ բարեգործական նպատակներով տի Զափրիոս 65 հազար տուրքով գնած է Ճոյ Պրետիլի նկարը: Դրամահաւաքի ընթացքին հնարաւոր դարձած է ստանալ 3.7 միլիոն տուրքի հասնող նուիրատուութեան խոստումներ:

Աւելի առաջ հիմնադրամին աջակցելու եւ նուիրատուութիւններ ընելու կոչ յղած էր աշխարհահռչակ դերասան Թոմ Հանքսը:

Կապոյտ Յիշատակներ Հրդեհուած Մելգոնեանէն «Մելգոնեանցի ըլլալը չի՛ բացատրուիր, այլ՝ կ'ապրուի» Մելգոնեանէն Մանրապատումներ

Թիւ 14 (Դ)

Էջ 02

Պարզապէս շէնքին մէջ պետք էր ըլլային: Ծաբաթը մէկ անգամ ծով, մէկ անգամ ալ լեռները պտոյտի կը տանէինք աշակերտները: Ըստ կը ձանձրանային, բայց այդ՝ չարեաց փոքրագոյնն էր: Բնականաբար մարզական խաղեր, «զուարթ երեկոյ»ներ, ընթերցանութիւն եւ նման զբաղմունքներ մաս կը կազմէին տղոց առօրեային:

«Հինգնոց»ով (տաշտ) ձիթապտուղ կար ճաշարանին ջուրի սենեակը, բայց քանի որ չորցած է թռչած էր, մարդ չէր ուզեր ուտել: Տղոց ըսի որ «ես ասիկա ձեզի կերցնեմ եւ դուք տեսէք»: Հինգնոցով ձիթապտուղ տարի խոհանոց, տաք ջուրով լուայիւ տեք քանի մը ժամ տաք ջուրին մէջ ձգեցի, որպէսզի թարմանայ: Նորէն պաղ ջուրով լուայիւ տեք, վրան ձիթափուր, լեմոն-սիտոր, կարմիր պղպեղ եւ քիմիոն դնելով բերի ճաշարան: Ժամը 5:00-ի ատենները տղաքը, ըստ իրենց սովորութեան, ճաշարան եկան նախընթացի իրենց բաժնիը առնելու: Երբ ձիթապտուղի տաշտը տեսան, պարզապէս յարձակեցան վրան եւ շուտով սկսան հացով տաշտին տակը մնացած լեմոն-սիտորը, ձիթափուրը եւ համեմունքը հաւաքել: Երբ տղոց ըսի, որ այդ՝ իրենց չիւսնած ձիթապտուղն էր, չհաւատացին:

Յոս փակագիծ մը բանալով ըսեմ, որ Պէյրուսէն գաղթականներ որ գային, նախ Մելգոնեան կու գային, այն յոյսով որ գրկաբաց պիտի ընդունինք զիրենք: Հոգաբարձութիւնը շատ խիստ հրահանգած էր ունէ մէկուն տեղ չտալ: Նախ չէի կրնար ընդունիլ այս անմարդկային որոշումը: Յետոյ իմացանք որ Լառնազայի եկեղեցիին սրահներուն կամ բակին մէջ բնակութիւն հաստատած այս «զաղթականներ»ուն տղայ մարդիկը, գիշերները քապարէներու եւ պարերու մէջ յոյն պերճադիմներուն հետ կ'անցնէ իրենց ժամանակը, մինչ ուրիշներ, եկեղեցիին շուքին տակ՝ կուկի գումարներով «խումար» կը խաղան: Զենեկալս, Գերոգ Յակոբեանն ու ես, բազմաթիւ ընտանիքներու դէպի Սիւրբաթ Նահանգներ վիզաներու դիմումագրերը լեցուցած էինք, անոնց համար բարեխօսած էինք դեսպանատան պաշտօնէաններուն (զխաւորաբար Պրն. Պարթէլլային, որուն խօսքը վերջնական էր դեսպանատան վիզաներու հարցին մէջ), անոնց օգնականին տոմսակները մասնաւոր գեղջերով ապահոված էինք, մեր ինքնաշարժներով հոս-հոն տեղափոխած, մինչեւ անգամ ընտանիքներով մեր տունները ճաշի տարած էինք (մե՛ղք էին), աներոջս տունէն բազմաթիւ անգամներ Լուս Անճելլո հեռաձայնած էին («դրամ դրկեցե՛ք»), շատերու համար տան կարասիներ կարգադրած եւ փոխադրած էինք: Այս բոլորին դիմաց միայն մէկ անձ, Լուս Անճելլո գալէն տեք շնորհակալական քարոյ մը դրկեց, միւսները՝ ո՛ր էն, չէնք գիտեր: Կարծեմ մեծ մասը Բաստիսան եկան եւ ...

Մեզի ըսուած էր ամառնային այդ գործը «կամաւոր» գետնի վրայ պիտի ըլլար: Եւ քանի որ գիտէի Պէյրուսի վիճակը եւ Մելգոնեանի «պիտոճեական հարցերը», սիրով ընդունեցի: Յետոյ տեղեկացայ որ Պրն. Պետեանին մասնաւոր կարգադրութեամբ, աղջկանց հերթապահուիչները ՀԲԸ Միութեան կեդրոնէն մասնաւոր գնահատագիր եւ նիւթական կուկի վարձատրութիւն ստացած են իրենց «գոհողութիւններուն համար» (Տիւ. Պետեանն ալ հերթապահուիչ էր...): Մաքուր հայերէնով ասոր կ'ըսես «էջ նահատակ գացինք»:

Ամբաս այս շրջաններէն մէկուն ժամանակ «ձիթապտուղի հարց» մը ունեցանք:

Ոչինչ, բարիքը ըրէ եւ ծով կեստ, կ'ըսես:

Մարզական

ՖԻՖԱ-ի Աշխարհի Ակումբներու Կիսաւարտական Քաշիմա Եւ Ռեալ Մատրիտ Հասան Աւարտական

Ճարտի մէջ սկսած ՖԻՖԱ-ի կազմակերպած տարեկան աշխարհի ցամաքամասերու ախոյեան ակումբներու կիսաւարտական հանգրուանին, Հարաւային Ամերիկայի ախոյեան Զոլոմպիոյ «Աթլետիքո Լաս Կրուս» պարտուեցաւ Ճարտի «Քաշիմա Էնթըրթ»-էն 0-3 հաշիւով: Կոլտրը նշանակեցին Տոյ տուգանային հարուածով 33-րդ վայրկեանին, Էստո 83-րդ վայրկեանին եւ Սուգուքի 86-րդ վայրկեանին: Կիսաւարտական հանգրուանի երկրորդ մրցումին, Եւրոպայի ախոյեան «Ռեալ Մատրիտ» յաղթեց Հիւս. Ե. Կեդր. Ամերիկայի ախոյեան Մեքսիքայի «Ամերիքա»-ին 2-0 հաշիւով: Զարիմ Պենզեմա 45+2-րդ վայրկեանին, Զոսուսի փոխանցումը կողի վերածեց: Իսկ 90+3-րդ վայրկեանին Զրիսթիանո Ռոնալտո նշանակեց երկրորդ կողը, Խամես Ռոտրիկէզի փոխանցումէն օգուելով: Աւարտական մրցումին «Ռեալ» պիտի մրցի Ճարտի ախոյեան «Քաշիմա Էնթըրթ»-ին դէմ: 5-րդ դիրքի մրցումին, Ասիոյ «Շոնպուք Սոթըրթ»-ը յաղթեց Ափրիկէի «Մամբլտի Սանտաուուգ»-ին 4-1 հաշիւով:

Անգլիոյ Ախոյեանութիւն Արսենալի Երկրորդ Պարտութիւնը

Շաբթուան մէջ սկսած Անգլիոյ ֆութբոլի ախոյեանութեան 16-րդ հանգրուանի մրցումներուն, «Արսենալ» իր դաշտէն դուրս՝ Լիվըրպոլի մէջ կրեց իր երկրորդ պարտութիւնը, երբ զիջեցաւ «Էվըրթըն»-ին 1-2 հաշիւով: Ստորեւ տեսնել 16-րդ հանգրուանի ցարդ արձանագրուած արդիւնքները.

- Էլ Էֆ Սի Պորսմըթ - Լեյսթըր Սիթի 1-0, կոլ. Մ. Փաֆ 34
- Էվըրթըն - Արսենալ 2-1, կոլեր. Զոլմէն 44, Ուիլիքս 86 - Ա. Սանչէզ 20
- Միտլըզպարա - Լիվըրպոլ 0-3, կոլեր. Լաւանա 29, 68, Օրիօն 60
- Սանտըրլէնտ - Չելսի 0-1, կոլ. Ֆապրեկաս 40, փոխ. Վիլիան
- Զրիսթըլ Փալաս - Մանչեսթըր Եունայթըտ 1-2, կոլեր. Մաքքըրըր 66 - Փոկպա 45+2, Իպրահիմովիչ 88
- Մանչեսթըր Սիթի - Ուաթֆըրտ 2-0, Թորընհէմ Բոքսինգ - Հալ Սիթի 3-0

Շաբթափոփ մրցումներու Յայտագիր

Ստորեւ տեսնել շաբթափոփ մրցումներու յայտագիրը (փակագիծերու մէջ՝ խումբին դիրքը).

Ուրբաթ 16 Դեկտեմբեր 2016

ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԻ 1/8-ՐԴ ԱՄԱՐՏ. ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 13:30 Ահիլ Սայտա (Բ.) - Թրիփոլի (9), Սաֆայի մարզ.
 Ժամը 13:30 Թատամնո Սուր (8) - Շապ. Ալ Սահէլ (10), Ալ Ահլուի մարզ.
ՍՊԱՆԻՈՅ ԱՆՈՅՅԱՆՈՒԹԵԱՆ 16-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 21:45 Տեփ. Ալվալէս (13) - Ռեալ Պելմա (14)
ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՆՈՅՅԱՆՈՒԹԵԱՆ 15-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 21:30 Հոֆմանայն (4) - Պորուսիա Տորթմունտ (6)
ՖՐԱՆՍԱՅԻ ԱՆՈՅՅԱՆՈՒԹԵԱՆ 18-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 21:45 Անտ (12) - Նանթ (19)
ՓՈՐՏՐՈՒԿԱՆ ԱՆՈՅՅԱՆՈՒԹԵԱՆ 14-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 22:30 Փաշու ՏԷ Ֆերերա (14) - Պելլենսես (9)
ՀՈՒՍՏՈՆԱՅԻ ԱՆՈՅՅԱՆՈՒԹԵԱՆ 17-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 21:00 Վիլիամ Թիլպըրկ (13) - Հիլընվիլ (4)
ՍԿՈՎՏԻՈՅ ԱՆՈՅՅԱՆՈՒԹԵԱՆ 18-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 21:45 Դեմիլթըն Աքադեմիքը (8) - Ռեյնըրդ (2)

ՊԱՍԵԹՊՈՒԼԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅՅԱՆ. 4-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 17:30 Շանվիլ (6) - Սուրթահետ Թրիփ. (7), Շանվիլի մարզ.

Շաբթաթ 17 Դեկտեմբեր 2016

ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԻ 1/8-ՐԴ ԱՄԱՐՏ. ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 13:30 Ալ Սապարրա (Բ.) - Ռասիկ (7), Սաֆայի մարզ.
 Ժամը 13:30 Սալամ Զոլարթա (4) - Նապի Շիթ (5), Ալ Ահլուի մարզ.

Ժամը 13:30 Ախաա Ահիլ Ալէյ (11) - Ալ Ահլու (1), Սայտայի քաղաք.
 Ժամը 13:30 Իժթիմաաի Թրիփ. (12) - Ասար (2), Թրիփոլի քաղաք.
ՍՊԱՆԻՈՅ ԱՆՈՅՅԱՆՈՒԹԵԱՆ 16-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 14:00 Սփորթինկ Էսթրա (18) - Վիլյարեալ (4)
 Ժամը 17:15 Աթլետիքո Մատրիտ (6) - Լաս Փալմաս (10)
 Ժամը 19:30 Կրանտա (19) - Ռեալ Սոսիետատ (5)
 Ժամը 21:45 Սելիա (3) - Մալկա (11)
ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՆՈՅՅԱՆՈՒԹԵԱՆ 15-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 16:30 Ար Պի Լայփցիկ (2) - Զերթա Պերլին (3)
 Ժամը 19:30 Վոլֆսպըրկ (15) - Այնթրախթ Ֆրանքֆորթ (5)
ԱՆԳՆԻՈՅ ԱՆՈՅՅԱՆՈՒԹԵԱՆ 17-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 14:30 Զրիսթըլ Փալաս (16) - Չելսի (1)
 Ժամը 17:00 Սթըք Սիթի (12) - Լեյսթըր Սիթի (14)
 Ժամը 19:30 Ուեսթ Պրոմիչ Ալպին (7) - Մանչեսթըր Եուն. (6)
ԻՏԱԼԻՈՅ ԱՆՈՅՅԱՆՈՒԹԵԱՆ 17-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 16:00 Էմիլիոլի (17) - Զալարի (14)
 Ժամը 19:00 Միլան (3) - Աթալանթա (6)
 Ժամը 21:45 Եուվերթիս (1) - Ռոմա (2)
ՖՐԱՆՍԱՅԻ ԱՆՈՅՅԱՆՈՒԹԵԱՆ 18-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 18:00 Կենկան (6) - Փարի ՍԷՄ Շերմէն (3)
 Ժամը 21:00 ՌԷՄ (5) - Պասթա (16)
ՓՈՐՏՐՈՒԿԱՆ ԱՆՈՅՅԱՆՈՒԹԵԱՆ 14-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 22:30 Եսթրիլ (11) - Պենֆիլդ (1)
ՀՈՒՍՏՈՆԱՅԻ ԱՆՈՅՅԱՆՈՒԹԵԱՆ 17-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 20:45 Ֆրենկուրտ (1) - Վիթե Արնհէմ (8)
ՍԿՈՎՏԻՈՅ ԱՆՈՅՅԱՆՈՒԹԵԱՆ 18-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 17:00 Սելթիք (1) - Տանտի (10)
ԱՐՃԱՆՔԻ ԱՆՈՅՅԱՆՈՒԹԵԱՆ 17-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 22:00 Եսթոնիանթ (2) - Տեֆեսա Ի Շուսթիսա (21)
 Ժամը 23:15 Ունիոն Սանթա Ֆե (12) - Ռասիկ (8)
 Ժամը 01:00 Ինտիփենտիթեթ (7) - Պանֆիլտ (6)

ՊԱՍԵԹՊՈՒԼԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅՅԱՆ. 4-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 17:00 Հ.Ս.Ը.Ս. (2) - Հիքմէ (9), Արզիերի մարզ.

Պասքէթպոլ Լիբանանի Ախոյեանութիւն Մէյրուպա Յաղթեց Հուվիսին



Լիբանանի պասքէթպոլի ախոյեանութեան 3-րդ հանգրուանի վերջին մրցումին, «Լուայզէ» իր դաշտին վրայ անակնկալ յաղթանակ մը տարաւ անցեալ տարուան ախոյեան Պէյրութի «Ռիատի»-ին վրայ: Ստորեւ տեսնել 5-րդ մրցումին արդիւնքը.

- Լուայզէ - Ռիատի Պէյրութ 77-71
- Ճերոն ճոնսըն 33 կ. 9 ռիպ. 3 փոխ. - Ահմատ Իսմայիլ 17 կ. 7 ռիպ. 4 փոխ.
- Իսկ 4-րդ հանգրուանի առաջին մրցումին արձանագրուեցաւ հետեւեալ արդիւնքը.
- Հուվիս - Ալ Իթթիհատ Մէյրուպա 72-82
- Ալի Արզիեր 32 կ. 3 ռիպ. 8 փոխ. - Զալվին Զեյն 31 կ. 4 ռիպ. 4 փոխ. Դասաւորում.
- 1-Պիպլոս 3 յաղթանակ - 0 պարտութիւն
- 2-Հ.Ս.Ը.Ս. 3 - 0
- 3-Լուայզէ 2 - 1

Under The Patronage of The Embassy of Armenia in Lebanon
Aramé Art Gallery
Presents
Enchanted Reality
 A unique art show featuring the selected works of Armenian Master Artists.

GABO | We Love To Party, 2015 | Acrylic On Canvas | 130x120cm

Opening Ceremony
 Sunday, December 18, 2016 at 6:00 P.M.
 Beirut Souks - Jewelry Souk
 Tel.: 01-567 537, 03-262 423
 Open daily, December 18, 2016 to January 6, 2017
 from 10:00 A.M. - 10:00 P.M.

Beirut Souks | Creditbank | solidere

ԼՈՅՍ ՏԵՄԱԻ

Ռամկավար Ազատական Կուսակցութեան

Լիբանանի Երջանակի 2017ի գունագարդ պատի օրացոյցը - 12 էջ -

ՈՍԿԱԿԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՍԱԿՍՅՈՒԹԻՒՆ

Մշակութային Յուշատետր

Ձեռնարկի անուն	Վայր	Թուական	Ժամ
ՀՈԳԵՄՐ ԼՍԱՐՄԱՆ	Սրբոց Վարդանանց Եկեղեցոյ մէջ	Ամեն Հինգշաբթի Օր	Առաւօտեան 10:00-Էն 11:00
ՉԵՐԿԱՆԱՅԻ ՀԱՆՐԱՍՈՒԹԻՒՆ Նուիրոսաճ՝ Պարոն ՍՏԵՓԱՆ ՊԵՕՃԵՔԵԱՆԻՆ Եւ Տիկին ՄԱՐԻԱ ՊԵՕՃԵՔԵԱՆԻՆ	Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Բարձրագոյն Վարժարանին «Ֆարաճեան» սրահին մէջ	Ուրբաթ, 16 Դեկտեմբեր 2016	Երեկոյեան 7:00
ԱՐՑԱՆԵԱՆ ՏՕՆԱԿԱՃԱՌ (Արցախեան ձեռագործներու, գեղանկարներու եւ արտադրութիւններու ցուցահանդէս-վաճառք)	«Ազգակի»-ի «Փիւնիկ» սրահին մէջ	Բացում՝ Ուրբաթ, 16 Դեկտեմբեր 2016 Բաց կը մնայ Շաբաթ 17 Եւ Կիրակի 18 Դեկտեմբեր 2016	Երեկոյեան 7:30 Առաւօտեան 10:30-Էն մինչեւ Երեկոյեան 8:00
Ս. ՅԱԿՈԲ ԵՎԵՂԵՑԻ-ԵՇՐԵՅԻՆ ԱՆՈՒՄԱԿՈՅՈՒԹԵԱՆ ՏՕՆ Ս. ՅԱԿՈԲ ՄՏԵՆԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ	Սուրբ Յակոբ Եկեղեցի - Էշրեֆիէ	Շաբաթ 17 Դեկտեմբեր 2016	
Լիբանանի «Պէյրութ Չանթ» փառատօն (9-րդ տարի) Համազգայինի ԱՅԳ երիտասարդական երգիչախումբ Մասնակցութեամբ՝ Համազգայինի ԿԱՐԿԱԶ Պատանեկան Երգչախումբին	Սուրբ Նշան Մայր Տաճարին մէջ	Շաբաթ, 17 Դեկտեմբեր 2016	Երեկոյեան 6:00-Էն 7:00
Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ Եկեղեցի Ս. ՇՆՆԻՆԻ ՀԱՍԵՐԳ	«Յովհաննէ Պողոսեան» թատերասրահին մէջ Պորճ Համմուտ	Կիրակի, 18 Դեկտեմբեր 2016	Երեկոյեան 7:30

Պատրաստեց՝ Մարիա Ե.

Տ Ն Օ Ր Հ Ն Է Ք

Այն ընտանիքները, որոնք զանազան պատճառներով զրկուած կը մնան Ս. Շննդեան եւ Չատկական տնօրիններէն, թող բարեհաճին 01-258300 հեռաձայնի թիւով կապուիլ Ազգային Առաջնորդարանի քարտուղարութեան եւ փոխանցել անուն մակամուն, հասցէ, հեռաձայնի թիւ եւ ծխային շրջանի անուն, որպէսզի քահանայ հայրը նաեւ այցելէ իրենց բնակարանները:

Կրօնական Ժողով
 Լիբանանի Հայոց Թեմին

Accountant Position

A female accountant needed and a minimum experience of 2 years in the field. Armenian language is a must, fluent in Arabic, English.

Kindly Send your CV to yep.management@gmail.com

Դաւանելով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Հետեւեալ թերթիս մէջ հրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեան տեսակետը: Կամքէ անկախ սպորտ վրիպակներու պարագային, կ'ապաւինինք յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան: